յայտնի ամէնքին եւ կրկնելու կարիք չկայ։ Արիւն, կոտորած, հրդեհ, աւերածութիւն, դերեվարութիւն եւ ամէն տեսակի երեւակայելի ու աներեւակայելի բռնութիւններ է միայն նրանցից տեսել մեր դժբախտ ժողովուրդը եւ ուրիշ ոչինչ։

Դրութիւնն այսպէս չարունակւում է, մինչեւ որ մեր երկիրը վերջնականապէս բաժանւում է հարեւան երկու մահմեդական պետութիւնների միջեւ — պարսիկների եւ տաճիկների (1639)։ Արեւելեան մեծագոյն մասին տիրում են պարսիկները, արեւմտեան եւ փոքր մասին՝ տաճիկները։ Սակայն հայ ժողովրդի տանջանքներն ու տառապանքները դրանով չեն վերջանում. ընդհակառակը, նրանք նորից չարունակւում են, բայց նոր ձեւերով, աւելի հետեւողականօրէն եւ սիստեմատիկ։

Շատ բնական է ուրեմն, որ նման դժոխային պայմաններում հայ ժողովուրդը — եթէ ոչ իր ամբողջութեամբ, բայց դէթ իր գիտակից մասով — պիտի մտածէր փրկութեան մէկ ճանապարհ գտնելու եւ իրեն վիճակուած դաժան ճակատագրից ազատագրուելու։ Այլ խօսքով՝ նա պէ՛տք է մտածէր առաջին հերթին իր քաղաքական անկախութիւնը ձեռք բերելու մասին, որովհետեւ առանց քաղաքական անկախութեան չկայ ազատութիւն։

Եւ յիրաւի. մենք տեսնում ենք մեր անցեալի մէջ մի շարք փորձեր այդ ուղղութեամբ։ Մանաւանդ մեր վերջին դարերի պատմութիւնը մէկից աւելի փաստեր է տալիս առ այն, որ Հայաստանի Անկախութեան գաղափարը միշտ էլ ունեցել է իր համար մի տաքուկ եւ հիւրընկալ անկիւն հայ ժողովրդի սրտում։ Դեռ աւելի. Հայաստանում Անկախութեան գաղափարը չի եղել մէկ այնպիսի գաղափար, որ դատապարտուած է միմիայն մարդկային ուղեղների մէջ մնալու եւ երբեք կեանքում իրականութիւն չդառնալու։ Ո՛չ. նա մեղանում նկատուել է որպէս փրկութեան միակ միջոց, որի իրականացման համար հայ ժողովուրդը տքնել է, սրտագին աշխատել եւ ծանր զոհաբերութիւններ յանձն առել։

Մեր պատմութիւնը, որ ընդհանրապէս շատ ժլատ է այդ կողմից, այնուամենայնիւ իր ծոցում պահել է մի քանի թանկագին յիշատակութիւններ, որոնք անհերքելիօրէն ապացուցանում են, որ Անկախութեան գաղափարը հայ ժողովուրդի սրտին միշտ էլ շատ մօտ է եղել։ Այդ յիշատակութիւնները գլխաւորապէս ԺԶ. դարից են սկսւում, որովհետեւ Պարսկաստանը արագ քայլերով դէպի քայքայում էր դիմում եւ ուրեմն Պարսկական Հայաստանի անկախութեան իրագործումը մեծ յոյսեր էր խոստանում։

Յայտնի են, օրինակի համար, Ստեփան Ե. Սալմաստեցի եւ Միքայէլ Ա. Սեբաստացի կաթողիկոսների փորձերը 1547 եւ 1563 թ. թ.։ Նրանք մտածում էին ազատագրել Հայաստանը պարսից լծից արեւմուտքի, գլխաւորապէս Հռոմի միջոցով։ Մի դար յետոյ նոյն փորձը կատարում է Յակոբը Դ. Ջուղայեցի կաթողիկոսը։ Էջմիածնում նա գումարում է մի գաղտնի ժողով (1678 թ.), մասնակցութեամբ վեց աշխարհական եւ վեց հոգեւորական անձերի, ուր որոշւում է պատուիրակութիւն ուղարկել Արեւմուտք՝ Պապից օգնութիւն խնդրելու։ Պատուիրակութիւնը ճանապարհ է ընկնում կաթողիկոսի գլխաւորութեամբ, բայց դժբախտաբար նպատակին չի հասնում։ Ճանապարհին, Պոլսում մեռնում է Ծերունի Հայրապետը եւ պատուիրակութիւնը ցրւում է։ Միակ օգուտը լինում է այն, որ պատուիրակութեան մի անդամը՝ Իսրայէլ Օրին չարունակում է իր ճանապարհը դէպի Եւրոպա։ Նա գնում է Վենետիկ. այստեղից էլ շուտով անցնում է Ֆրանսա, ուր մտնում է զինուորական ծառայութեան։ Լուսաւոր Եւրոպայում բաւական երկար ապրելով եւ սովորելով, նա պատրաստւում է այն մեծ գործի համար, որով ապագայում այնքան օգտակար պիտի լինէր հայկական դատին։

17-րդ դարի 90-ական թուականներին Իսրայէլ Օրին իր ձեռքն է առնում Հայաստանի ազատագրութեան գործը և ամենայն եռանդով նրան նուիրւում։ Նա էլ սկզբում, իր նախորդների նման, Արեւմուտքում է փնտռում հայ ժողովրդի փրկութիւնը, գլխաւորապէս իր անձնական բարեկամի, Պֆալցի մեծ իշխանի մօտ։ Բայց շուտով Արեւմուտքից յուսահատուելով, իր հայեացքը ուղղում է դէպի հիւսիս, Ռուսաստանից ակնկալելով հայոց հարցի լուծումը։ Դժբախտաբար, ռուսներն էլ երկար խարխսելուց եւ սին խոստումներով հայերին